«ԻՆՏԵՐԱԿՏԻՎ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄ»
ՀԻՄՆԱԴՐԱՄ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ 2022

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԹԵՄԱ	Բանահյուսության դերը դպրոցական ուսուցման համակարգում
ԱՌԱՐԿԱ	Հայոց լեզու և գրականություն
ՀԵՂԻՆԱԿ	Կարինե Ասատրյան
ՄԱՐԶ	Կոտայք
ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ	Մեղրաձորի միջնակարգ դպրոց

Բովանդակություն

Ներածություն……2

Բանահյուսություն……4

Բանահյուսություն և գրականություն……10

Եզրակացություն……13

Գրականության ցանկ……14

Հավելված……15

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Բանահյուսությունն անփոխարինելի տեղ ունի դպրոցական ուսուցման համակարգում: Բանահյուսական նյութերը՝ հեքիաթներ, առասպելներ, առակներ, դյուցազներգություն, ժողովրդական խաղիկներ, հայրեններ,հանելուկներ, առած-ասացվածքներ, ցրված են գրեթե բոլոր դասարանների դպրոցական դասագրքերում: Դրանց մեջ արտացոլված են տվյալ ժողովրդի ազգային բնաբուխ յուրահատկությունները: Սովորողները միշտ էլ սիրով են կարդում այդ նյութերը: Ճիշտ կլինի, որպեսզի գրականություն և գրականության պատմություն անցնելուց առաջ, այսինքն 7-րդ դասարանից առաջ, դպրոցներում ուսուցանվի բանահյուսությունը որպես առանձին առարկա: Այս դեպքում բանահյուսական նյութերը կհավաքվեն առանձին դասագրքի մեջ, կհամակարգվեն և կներկայացվեն ըստ պատշաճի:

Ազգային բանահյուսական նյութերին զուգահեռ կարելի է ներկայացնել նմուշներ նաև հին աշխարհի այլ ժողովուրդների բանավոր ստեղծագործություններից: Վստահորեն

կարելի է ասել, որ այդ դասգիրքը սիրով կընդունվի դպրոցում, մեծապես կնպաստի սովորողների մտավոր զարգացմանը և կնախապատրաստի անցումը գրականությանը:

Բանահյուսության գլխավոր առանձնահատկությունն այն է, որ խորապես ազգային է: Այստեղ է երևում յուրաքանչյուր ժողովրդի բարոյահոգեբանական կերտվածքը, երազանքները, նպատակները: Բանահյուսությունը ժողովրդի հավաքական մտածողության արդյունք է: Իսկ ժողովրդական խոսքի հորինողները , ում անունները մենք չգիտենք, մեզ են փոխանցվել սերունդների հիշողությունը:

Ազգային մշակույթի, նրա արմատների պահպանումն ու զարգացումն այն կարևորագույն խնդիրն է, որը պահանջում է զգույշ վերաբերմունք պատմության և մշակույթի հուշարձաններին, ավանդական ժողովրդական արվեստին: Բանահյուսության, ժողովրդական սովորույթների, ծեսերի ու տոների, ավանդական արվեստների ու արհեստների ու կերպարվեստի վերածնունդը մեր ժամանակի հրատապ խնդիրն է: Հետազոտության նպատակն է՝

- ✓ բացահայտել բանահյուսության նշանակությունը ազգային կրթության համակարգում
- ✓ բնութագրել բանահյուսության երևույթը և նրա դաստիարակչական արժեքը.
- ✓ բնութագրել բանահյուսության հիմնական ժանրերը՝ հիմնվելով յուրաքանչյուրի կրթական ներուժի վրա.
- ✓ ցույց տալ հիմնական բանահյուսական ժանրերի գործնական կիրառումը կրթության մեջ:

Բանահայուսություն

Բանահյուսությունը դա այս կամ այն ժողովրդի կերտած բանավոր ստեղծագործությունների ամբողջությունն է:Բանահյուսության մեջ ժողովուրդն արտացոլել է իր պատմության առավել կարևոր դեպքերը, իր դարավոր փորձն ու իմաստությունը, ձգտումներն ու իդեալները: Ըստ էության, բանահյուսությունը (ֆոլկլորը) ժողովրդի կյանքի և աշխարհազգացողության հայելին է: Ժողովրդական բանահյուսության երկերն ստեղծվել և դարերով պահպանվել են բանավոր, հաղորդվել սերնդից սերունդ: Դրանք շատ հաճախ բանասացի կողմից կատարվել, նույնիսկ ստեղծվել են ուղղակի լսարանի առջև, երբեմն երգի և նվագի ուղեկցությամբ: Բանահյուսական ստեղծագործությունները ժամանակի ընթացքում փոփոխվել, զարգացվել և հարստացվել են բազմաթիվ անանուն հեղինակների կողմից: Այդ է պատճառը, որ բանահյուսական երկերը սովորաբար մի շարք տարբերակներ են ունենում: Ժողովրդական բանահյուսության տեսակները բազմազան են՝ առակ, հեքիաթ,



հանելուկ, ասացվածք, առասպել, ավանդավեպ, ասք, ավանդություն, վիպերգություն (էպոս), աշխատանքային, սիրո երգեր և այլն: Այս ժանրերից յուրաքանչյուրն ունեցել է բովանդակության, կառուցվածքի, պատկերավորության կայուն յուրահատկություն: Բացի այդ՝ յուրաքանչյուր ազգի բանահյուսության մեջ եղել են ուրույն ժանրային ձևեր, օրինակ՝ ռուսական բիլինան, չաստուշկան, ուկրաինական դուման և այլն: Հայ հին բանահյուսության

մեջ եղել են բազմազան տեսակներ՝ զրույց, առասպել, ավանդավեպ, վիպասանք և այլն։ Բանահյուսության շատ թեմաներ, սյուժեներ ու կերպարներ մշակվել և ընդհանրացվել են տարբեր գրողների կողմից։ Բավական է նշել միայն Հովհ. Թումանյանի և Ավ. Իսահակյանի բալլադները, հեքիաթներն ու պոեմները, որոնք ստեղծվել են ժողովրդական աղբյուրների հիման վրա։

Միշտ էլ եղել են օժտված անհատականություններ, ովքեր իրենց միջավայրում նվաճել են հեղինակություն և դարձել որևէ բնագավառի առաջնորդ։ Այդպես շրջապատից առանձնացել են մարդիկ ու դարձել ռազմական ղեկավարներ, աշխատանքի ու կենցաղի կազմակերպիչներ, հոգևոր և մշակութային առաջնորդներ։ Գրողի կերպարը՝ որպես իրմտքերն ու ապրումները գրի առնող հեղինակ, ձևավորվել է շատ ավելի ուշ։ Դրանից առաջ եղել են ստեղծագործողներ, կատարողներ, ովքեր կարողացել են երգել, հեքիաթներ, պատմություններ հորինել ու պատմել։ Նրանք եղել են բանավոր ստեղծագործողներ՝ օժտված հորինելու, հիշելու և պատկերավոր պատմելու հմտությամբ։ Մարդկության պատմական զարգացման ընթացքում այդպիսի մարդիկ վիթխարի դեր են կատարել՝ ապահովելով սերունդների հիշողության փոխանցումը, հոգևոր-մշակութային կերտվածքի ձևավորումը։ Այդ մարդկանց անվանում ենք պատմող, ասացող, գուսան, աշուղ, ովքեր ըստ էության ժողովրդական խոսքի հորինողներն են։

Եղել են ստեղծագործող ասացողներ, եղել են նաև ստեղծվածը կրկնողտարածող-կատարողներ։ Այսպես ասացող-պատմող-կատարողների շնորհիվ ստեղծվել են գրական երկեր և փոխանցվել սերնդեսերունդ։ Քանի որ ստեղծողների անունները չեն պահպանվել, իսկ նրանց ստեղծածը ժողովրդականացվել, տարածվելով շրջապատի մեջ, բերնեբերան փոխանցվել է հաջորդ
սերունդներին, ուստի գեղարվեստական այդ ժառանգությունը բնորոշվում է որպես բանահյուսություն, ժողովրդական ստեղծագործություն, անգիր գրականություն։ Անգլերեն folklore (ժողովրդական իմաստություն) եզրույթը շրջանառության մեջ է 1846–ից և ձեռք է բերել միջազգային ճանաչում։

Բանահյուսությունն այն ամենն է, ինչը գալիս է ժողովրդական ավանդույթներից՝ իր մեջ

ներգրավելով բոլոր բնագավառները՝ կենցաղից ու սովորություններից մինչև հավատալիքներ, երգեր ու բանաստեղծություն: Բանահյուսությունը ժողովրդի ստեղծած ազգագրական հարուստ ժառանգությունն է, ինչի մի բնագավառը ժողովրդական խոսքարվեստն է: Բանահյուսություն բառը կազմված է բան –խոսք և հյուսել արմատներից:

Բանահյուսության գլխավոր առանձնահատկությունն այն է, որ խորապես ազգային է, ազգային ինքնության նախահիմքն է: Այստեղ է երևում յուրաքանչյուր ժողովրդի ազգագրական յուրահատկությունը: Հայոց բանահյուսությունը սկզբից ևեթ ունեցել է մեկ գլխավոր ուղղվածություն՝ հայրենասիրություն: Հայրենասիրական բնույթ ունեն մեր առասպելները, վիպական երգերը և մյուս բոլոր ստեղծագործությունները:

Հայոց գրերի գյուտից հետո մեր առաջին պատմիչները, ապա բանաստեղծները, գրողները գրի առան այդ բանավոր երկերը որպես պատմագրություն, զրույց, դյուցազներգություն: Մովսես Խորենացին ոչ միայն առաջին բանահավաքն էր, այլև առաջին բանագետը, ով որոշակի գեղագիտական չափանիշ է սահմանում (վերաբերմունքը հունական և պարսկական առասպելներին) և առանձնացնում բանահյուսական տեսակները՝ վեպ, վիպասանք, առասպել, զրույց, թվելյաց երգեր, գուսանական երգեր, պարերգեր, ցուցքեի երգեր (<<երգս ցցուց>>), որ պետք է հասկանալ կատակերգ: Ազգային պատմական երգերի երկու տեսակ է առանձնացվում՝ <<երգ վիպասանաց>>, որոնք ուրիշները <<երգ թուելեաց կոչէին>>: Այսինքն՝ գործ ունենք նույն երգի երկու անվանումների հետ, ըստ որի՝ երգ վիպասանաց և երգ թվելյաց ձևակերպումները հոմանիշներ են: Այստեղից թվելյաց երգի՝ Մանուկ Աբեղյանի բացատրությունը՝ երգ թվող, ասող, որ նույն վիպողն է: Ըստ Աբեղյանի՝ վիպասանք, երգ վիպասանաց ասելով՝ Խորենացին նկատի ունի առասպելը:

(1)Պատմիչների երկերում պահպանվել են նաև այլ երգատեսակներ բնորոշող արտահայտություններ՝ նվագ, գեղունք, մրմունջք: Գրիգոր Գրիգորյանը հավանական է համարում, որ նվագն ու գեղունքը լինեն սիրո երգեր, իսկ մրմունջքը՝ թախծի, տխրության, մահվան :

Բանահյուսությունը զարգացել է մարդկության գիտակցական գործունեության ամենասկզբից՝ հենց նախնադարյան համայնական հաարակարգից, անցել է

ստրկատիրական, ավատական, բուրժուական պատմական հսկայական ժամանակահատված և եկել հասել է քաղաքակրթության ներկա փուլին: Բանահյուսությունն սկսել է պարզ տեսակներից, հետագայում ընդլայնել է իր տեսականին, իսկ այսօր մարդկության առաջընթացն ապահովող ժողովուրդների մեջ պահպանվել է հիմնականում մի քանի դրսևորումներով՝ անեկդոտ, իմաստախոս առակ կամ այլաասացություն,օրհնանք, անեծք, հայհոյանք: Այս ընթացքում մարդկությունն անցել է տևական ու երկար մտավոր մի ճանապարհ, ենթարկվել կրոնական, քաղաքական, տնտեսական ու տեխնիկական մի քանի հեղաշրջումների: Սա նշանակում է, որ վերափոխությունների է ենթարկվել մարդկության պատմական հիշողությունը: Հենց միայն հեթանոսությունից քրիստոնեություն անցումն արմատական փոփոխություն կատարեց մարդկության գիտակցության մեջ: Դրան հաջորդեցին ժողովուրդների բռնի նվաճումները Լատինական Ամերիկայում, Աֆրիկայում, Ասիայում: Նվաճողները պարտադրեցին իրենց լեզուն ու մշակույթը, բայց տեղաբնիկների պատմականն հիշողությունը երբեք չկտրվեց ազգային բանահյուսությունից:

Բանահյուսությունը դարձավ ոչ միայն հավաքման ու համակարգման նյութ, այլև 18-րդ դարի վերջին և հատկապես 19-րդ դարում՝ ուսումնասիրության առարկա: Ձևավորվեց մի նոր գիտաճյուղ՝ բանագիտություն: Սկզբնական շրջանում բանագիտությունը զարգանում էր գրականագիտության համակարգում, բայց, աստիճանաբար ինքնուրույնանալով, նաև ուղղորդեց գրականագիտական միտքը: Բանագիտական առաջին ուղղությունը կոչվեց առասպելաբանական, քանի որ 18-19-րդ դարերում ուժեղացավ գրական-մշակութային հետաքրքրությունը առասպելների հանդեպ: Դա գաղափարապաշտության (ռոմանտիզմի) դարաշրջանն էր: Գաղափարապաշտ գրողների կողմից բանահյուսության հանդեպ հետաքրքրությունն այնքան ուժեղ էր, գրական երկերը հագեցած էին բանահյուսական ու դիցաբանական այնպիսի առատ նյութով, որ դա առիթ դառնալով ծնունդ տալու առասպելաբանական գրականագիտական դպրոցին:

Բանահյուսության ուսումնասիրությամբ զբաղվող գիտությունը՝ բանագիտությունը, իբրև առանձին գիտություն ձևավորվել է 19-րդ դ. սկզբներին, Գրիմմ եղբայրների, հատկապես՝ Յակոբ Գրիմմի կողմից: Եվրոպական առաջավոր երկրների բանագիտական մտքի ազդեցությամբ 19-րդ դ. կեսերին հայ մտավորականությունը ևս կարևորեց մեր ժողովրդի բանավոր ավանդության տարբեր ժանրերի գրառման, հրատարակման և ուսումնասիրման պատմամշակութաբանական անհրաժեշտությունը: (1)Հայ ժողովրդական բանահյուսության հավաքման և հետազոտման գործընթացը սկզբնավորվեց Գ. Սրվանձտյանցի «Գրոց ու բրոց և Սասունցի Դավիթ կամ Մհերի դուռ» (1874 թ.) աշխատանքով, որը առաջ բերեց բանահավաքչական մեծ շարժում: Այսօր դեռևս կենցաղավարող բանահյուսության մի շարք տեսակների գոյությունը վտանգված է, ուստի, էլ ավելի է կարևորվում հոգևոր մշակութային արժեքների գրանցման՝ գույքագրման, հավաքման ու պահպանման աշխատանքները: Ոչ նյութական մշակութային ժառանգության դասակարգման, գրանցման ու պահպանման նպատակով ժողովրդական բանահյուսության տեսակները դասակարգելիս և նրանց համառոտ բնութագրերը կազմելիս հաշվի է առնվում հայ բանագիտության բնագավառում առկա սկզբունքները և գնահատականները:Հայ բանագիտության մեջ ժողովրդական բանահյուսությունը ընդունված է բաժանել երկու սեռի՝ վիպական և քնարական: Թե՛ վիպական, թե՛ քնարական սեռերի որոշ տեսակներ նաև պարունակում են դրամատիկականի տարրեր:

Ներկայումս՝ ժողովրդի հիշողությունից հետզհետե անհետացող ավանդական ժանրերի փոխարեն նոր բանահյուսություն է հանդես գալիս. նորացում են ապրում ժողովրդական զրույցների մի քանի տեսակներ՝ անեկդոտը, առակը, երգիծական տարբեր

մանրապատումները՝ բարոյակենցաղային, սոցիալական, քաղաքական նոր բովանդակությամբ:

1.Գ. Գրիգորյան, <<Հայ ժողովրդական բանահյուսություն>>, Ե., 1980, էջ 56

Բանահյուսություն և գրականություն

Գրականությունը բանահյուսության գրավոր և հեղինակային շարունակությունն է, որ աստիճանաբար ձևավորեց իր ինքնուրույն բնագավառները և դրսևորման ձևերը՝ տեսակները: Բանահյուսությունը հիմքն է ոչ միայն գեղարվեստական գրականության, այլև պատմագրության, վարքաբանության, սրբախոսական գրականության և այլն: Բանավոր պատումներից են գրի առնվել <Աստվածաշունչ> մատյանի Հին ու Նոր Կտակարանների շատ ու շատ նյութեր, Հոմերոսի <Ոդիսական> ու <Իլիական> պոեմները, հույն պատմիչների շատ հիշատակումներ: Բանահյուսական նյութերից են հավաքվել ու ամբողջացվել Ագաթանգեղոսի, Բուզանդի, Խորենացու, Սեբեոսի, Հովհան Մամիկոնյանի, Անանիա Շիրակացու, Մովսես Կաղանկատվացու, Արիստակես Լաստիվերցու, Հովհաննես Դրասխանակերտցու, Կիրակոս Գանձակեցու, Ստեփանոս Օրբելյանի, Առաքել Դավրիժեցու և մյուսների պատմությունները: Գրիգոր Նարեկացին, Ներսես Շնորհալին մեկ անգամ չէ, որ դիմել են բանահյուսական նյութերի, ժողովրդական ստեղծագործության առանձին ձևերի: Իր խոսքին ներգործման ավելի մեծ լիցք հաղորդելու նպատակով Նարեկացին գիտակցաբար դիմում է ժողովրդի մեջ տարածված լալյաց երգերին: Առասպելաբանությունը Շնորհալու պոեմների համր հիմք է դարձել: Շնորհալին նաև հանելուկների բանահավաք էր: Բանահյուսական նյութերով հարուստ են Մխիթար Գոշի և Վարդան Այգեկցու առակները, Ֆրիկի, Հովհաննես Երզնկացու, Մկրտիչ Նաղաշի, Հովհաննես Թլկուրանցու, Նաղաշ Հովնաթանի, Սայաթ-Նովայի ստեղծագործությունները: Գեղարվեստական գրականությունն իր յուրահատկություններով, անշուշտ, տարբերվում է բանահյուսությունից, բայց, բոլոր դեպքերում, գեղարվեստական գրականության հիմքերը բանահյուսության մեջ են: Հայ մտավոր կյանքում այս կողմնորոշումը շարունակվում է դարերի միջով և հասնում մինչև 19-20-րդ դարեր՝ Մեսրոպ Թաղիադյան, Խաչատուր Աբովյան, Ռափայել Պատկանյան, Ռաֆֆի, Պերճ Պռոշյան, Ղազարոս Աղայան, Հովհաննես Հովհաննիսյան, Հովհաննես Թումանյան, Ավետիք Իսահակյան, Եղիշե Չարենց, Ակսել Բակունց, Հովհաննես Շիրազ, Համո Սահյան, Հրանտ Մաթևոսյան, անգամ Մուշեղ Գալշոյան: Հենց միայն <Աբովյանը և բանահյուսությունը>, <Թումանյանը և բանահյուսությունը> առանձին ուսումնասիրության

նյութ են: Մեկ անգամ չէ, որ Թումանյանը խոստովանել է, որ իր գեղարվեստական երկերի հիմքը բանահյուսությունն է: Իսկ բանահյուսության, բանահյուսության ու գրականության կապի մասին նրա ասույթներն անսահման են և ուսանելի: 20-րդ դարի 60-70-ական թթ. Մուշեղ Գալշոյանը ձայնագրիչը ձեռքին շրջում էր Թալինի գյուղերում և պատմական Սասունից ու Մուշից վերաբնակված տարեց մարդկանցից գրառում էր գաղթի ու եղեռնի հետ կապված պատմություններ, լեզվական դարձվածքներ ու իմաստախոսություններ, անգամ մարդկանց ու կենդանիների անուններ ու մականուններ: Այս ամենը ծնունդ տվեց նրա ստեղծագործությանը, հատկապես <Մարութա սարի ամպերը> պատմվածաշարին: Գեղարվեստական գրականությունը ոչ միայն օգտվում է բանահյուսական նյութերից՝ ներգրավում պատումի մեջ, ենթարկում առանձին մշակումների, այլև դարձնում է ամբողջ ստեղծագործության հենք և հյուսվածք: Ասվածի ցայտուն արտահայտությունը ոչ միայն նշված գրողների առանձին երկերն են, հատկապես Թումանյանի ստեղծագործությունը, այլև ժամանակակից գեղարվեստական զարգացման ուղղությունը ճշտող այնպիսի մի երկ, ինչպիսին կոլումբիացի արձակագիր Գաբրիել Գարսիա Մարկեսի <Հարյուր տարվա մենություն> վեպն է, ինչի նախօրինակը հայ գրականության մեջ Մահարու <Այրվող այգեստաններ>-ն է: Բանահյուսությունից, բանահյուսականութունից շատ հեռու այնպիսի գրողներ, որպիսիք Չարենցը, Մահարին ու Սևակն են, դարձյալ վերադարձան ժողովրդական այդ ջինջ ակունքներին: Գրական նորագույն կողմնորոշումները ևս պարբերաբար նորոգում են բանահյուսության հետ կապը, ինչն արտահայտվել է հատկապես առասպելաբանության ու հրաշապատումի համակարգված ուղղվածությամբ: Այս տեսակետից Մարկեսի նշված վեպին կարող ենք ավելացնել 20-րդ դարի 2-րդ կեսի լատինաամերիկյան արձակի մեծ մասը: Բանահյուսությունն ընդհանրապես ազգային գիտության ու մշակույթի հիմքն է, գրականությունից բացի՝ ազգագրության, պատմագրության, լեզվաբանության, հավատալիքների, սովորույթների, կենցաղի, ծեսերի, հմայությունների, ինչպես նաև երաժշտական արվեստի: Վերջին դեպքում չմոռանանք, որ երաժշտական ստեղծագործություններն ունեն նաև բառային ատաղձ: Կոմիտասը հավաքեց և մշակեց ժողովրդական երաժշտական գանձերը: Բանահյուսական հիմք ունեն Արամ Խաչատրյանի, Առնո Բաբաջանյանի նաև ստեղծագործություններից: Լեզվաբանության

կապակցությամբ ավելացնենք, որ բառաշերտերի ստուգաբանական ծագումնաբանությունից զատ այստեղ հույժ կարևոր է բարբառը: Յուրաքանչյուր բարբառ իր բառապաշարով, քերականական ձևերի յուրահատկություններով, արտաբերման երաժշտական հնչերանգով մի ուրիշ աշխարհ է: Այստեղ է լեզվի համն ու հոտը, լեզվի բնաբուխ տարերքն իր օրհնանքներով ու անեծքներով, երդումներով ու հայհոյանքներով: Ժողովրդական բանավոր ստեղծագործության ամենամեծ գանձը բարբառն է: 1915-ին բարբառներից շատերն իրենց ժողովրդի հետ մեկտեղ բռնագաղթվեցին, հայրենազրկվեցին, բայց վերապրողներն այսօր էլ շարունակում են կենդանի պահել բարբառը: Իրենց տեղերում ամուր են Ղարաբաղի բարբառը, Լոռու, Շիրակի, Գորիսի խոսվածքները: Վերաբնակներն Արարատյան դաշտում կենդանի են պահում Խոյի ու Վանի, Թալինում՝ Սասունի, Սևանի ավազանում՝ Բայազետի, Մոկսի, Ալաշկերտի բարբառները:

Հայ ժողովրդական բանահյուսությունն սկզբնավորվել է հայկական ցեղերի և հայոց լեզվի առաջացման հետ միաժամանակ: Պատմականորեն նախորդել է հայ գրավոր դպրությանը. դարեր շարունակ եղել ժողովրդի հոգևոր, գեղարվեստական պահանջների բավարարման հիմնական միջոցը. հայ գրականության սկզբնավորման շրջանում (V դ.) դարձել է նրա կայուն հիմքերից ու բաղադրիչներից մեկը, ապա բանավոր ավանդությամբ շարունակել է զարգանալ իր ինքնուրույն ճանապարհով. ուշ միջնադարում (XII—XVI դդ.) զորեղ կերպով ներազդել է հայ գեղարվեստի, գրականության վրա, առանձին ժանրերով (հանելուկ, առակ, երգ, զրույց) թափանցել նրա մեջ, երանգավորել գրականության ոգին ու արտահայտության միջոցները, հասել մինչև մեր օրերը: XIX—XX դդ. հայ գրողների հատուկ միտումով մշակվել է և օգտագործվել նոր գրականության մեջ:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Հայ ժողովրդի ազգապահպան գործում մեծ է ժողովրդական բանահյուսության դերը: Հատկապես այն ժամանակ, երբ ազգային դաստիարակության ոլորտում նկատվում է ազգային արժեքների, մտածելակերպի, բարոյական նորմերի համընդհանուր նահանջ: Բանահյուսությունը ժողովրդի ոչ միայն մշակութային հարստությունն է, այլև նրա հոգևոր գանձարանը, որի արժեքները ըստ արժանվույն գնահատելուց հետո պարտավոր ենք այն խնամքով հանձնել սերունդներին:

Սովորողների դաստիարակության համար կարևոր է ազգային մշակութային արժեքները ճանաչելու, վերաիմաստավորելու, երեխաներին ազգային ոգով դաստիարակելու անհրաժեշտությունը: Այսօր շատ կարևոր է ապահովել նոր սերնդի դաստիարակությունը՝ ձևավորված ազգային հոգեբանությամբ, ազգային չափանիշներով ու ըմբռնումներով, առանձնահատկություններով: Ազգային արվեստի, կենցաղի, խորհրդանիշների, հայրենի բնաշխարհի յուրահատկությունների, ժողովրդական բանահյուսության հետ ծանոթությունը, հաղորդակցումը դա նպաստում է սովորողների ազգային բարոյական հիմքերի ձևավորմանը, որը միշտ էլ եղել է մանկավարժական գիտության հիմնական հիմնահարցերից մեկը:

Հայ դպրոցի, առհասարակ հայերի դաստիարակության կարևորագույն խնդիրն է՝ ապահովել ազգայինի և համամարդկայինի մեկտեղումը: Ուրեմն ազգային դաստիարակությունն իր մեջ պետք է ներառի նաև համամարդկային արժեքներ: Մարդը կարող է դաստիարակավել միայն իր հարազատ միջավայրում՝ յուրացնելով իր նախնիների փորձն ու ժառանգությունը, ժողովրդական բանահյուսությունը:

Դպրոցի կարևորագույն նպատակն է նոր սերնդի ներքին, բարձր համոզվածության կերտումը, ազգային արժեքների, ավանդույթներին, սովորույթների ձեռքբերումն ու պահանումը:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1.Հայ ազգագրություն և բանահյուսություն, հ. 21, հ. 25, Երևան, 2000, 2008:

2.Հայ ազգաբանության և հնագիտության խնդիրներ-3, Երևան, 2007:

3.Հայ բանահյուսության քրեստոմատիա, Երևան,1974:

4.Հայկական ժողովրդական հեքիաթներ, հ. 6, Երևան,1973 :

5.Հայ ժողովրդական հեքիաթներ, առաջին գիրք, Վաղարշապատ, 1882:

6.Գ. Գրիգորյան, <<Հայ ժողովրդական բանահյուսություն>>, Ե., 1980

ՀԱՎԵԼՎԱԾ